ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ԶՈՐԱՄԱՍԵՐՈՒՄ

ՄԱՐԱՏ ՍԱՀԱԿՅԱՆ

Սովետական Մերձբալթիկայի համար մղվող պաշտպանական մարտերի դաժան փորձության մեջ կոփվում և ամրապնդվում էր կարմիր բանակի բազմազգ մարտիկների անխախտ բարեկամությունը[1]։ Տարբեր ազգությունների մարտիկները հասկանում էին, որ Ղազախստանի, Ուզբեկստանի, Վրաստանի, Թուրքմենիայի, Ադրբեջանի, Տաջիկստանի, Հայաստանի և մյուս հանրապետությունների սահմանները անցնում են սովետական Մերձբալթիկայի, Բելոռուսիայի, Ուկրաինայի, Մոլդավիայի միջով և որ հայրենիքի ճակատագիրը վճռվում է այնտեղ, ուր մարտեր են մղվում երդվյալ թշնամու դեմ։ Այդ օրերին դրսևորվեց սովետական ռազմիկների ինտերնացիոնալ միասնությունը, համախմբվածությունը, մարտական եղբայրությունն ու բարեկամությունը, բարձրացավ նրանց պատասխանատվությունը սովետական պետության, մեր բազմազգ սոցիալիստական հայրենիքի պատմական նվաճումների ճակատագրի հանդեպ։ Պաշտպանական կատաղի մարտերի ընթացքում ամբողջությամբ բացահայտվեցին բազմազգ կարմիր բանակի մարտիկների անսահման նվիրվածությունը հայրենիքին, գաղափարական բարձր համոզվածությունը, արիությունն ու տոկունությունը, նախաձեռնությունն ու վճռականությունը։ Հիրավի, մարգարեական դարձավ Ֆ. Էնգելսի այն նախագուշակումը, որ սոցիալիստական հասարակության անդամը «... պետք է պաշտպանի իսկական հայրենիքը, իսկական օջախը, որ նա, հետևաբար, կպայքարի ոգեշնչված, տոկունությամբ և քաջությամբ, որոնց առջև պետք է ծղոտի նման հողմացրիվ լինի ժամանակակից բանակի մեքենայական վարժվածությունը»[2]։

Ծանր պայմաններում մարտիկների բարոյամարտական բարձր ոգու դրսևորումը, ինտերնացիոնալ միասնության պահպանումն ու ամրապնդումը արդյունք էր կարմիր բանակի զորամասերի և միավորումների կուսակցական-քաղաքական մարմինների եռանդուն ու քրտնաջան աշխատանքի։ Վ. Ի. Լենինը կուսակցական-քաղաքական նպատակասլաց աշխատանքի մեջ տեսնում էր այն ուժը, որը կարող է ամրապնդել զինվորական կարգապա-

---

[1] *Արխիվային նյութերի հիման վրա հոդվածում փորձ է արվում ցույց տալ պատերազմի առաջին ամիսներին Հյուսիս-արևմտյան ռազմաճակատի 8-րդ և 11-րդ բանակների զորամասերում ու միավորումներում կատարված կուսակցական-քաղաքական աշխատանքը սովետական ռազմիկների բարոյաքաղաքական և մարտական միասնության ամրապնդման գործում։*

[2] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 2, էջ 539։

հությունը, մարտական ուժեղ ոգին և բարոյաքաղաքական բարձր հատկությունները։ Նա մատնանշում էր, որ «այնտեղ... որտեղ ամենից ավելի խնամքով է կատարվում քաղաշխատանքը զորքերում... այնտեղ թափթփվածություն չկա բանակում, այնտեղ ավելի լավ է զորաշարքը և բանակի ոգին, այնտեղ ավելի շատ են հաղթանակները»[3]։ Ղեկավարվելով մեծ առաջնորդի ցուցումով, ռազմաճակատի կուսակցական մարմիններն իրենց ուշադրությունը հիմնականում կենտրոնացնում էին Հայրենական մեծ պատերազմի արդարացի նպատակների ու բնույթի պարզաբանման, գերմանական ֆաշիզմի մարդատյաց ռասայական գաղափարախոսության մերկացման, հիտլերյան բանակի «անպարտելիության» վերաբերյալ առասպելի պսակազերծման և սովետական մարտիկներին սոցիալիստական հայրենիքին անսահման նվիրվածության ոգով դաստիարակելու վրա։ «Բոլշևիկ» ամսագիրն ընդգծում էր. «Ներկա պատերազմում ճակատամարտերի ելքը ամենից առաջ վճռվում է մեր զորքերի և առանձին վերցրած յուրաքանչյուր ռազմիկի տոկունությամբ, նրանց արիությամբ, խիզախությամբ, անձնազոհությամբ, դիմացկունությամբ և սառնասրտությամբ։ Ինչպիսի դժվարին պայմանների մեջ էլ հայտնվի կարմիր մարտիկը, նա պետք է պահպանի ինքնատիրապետումը, անսասան մարտական ոգին, թույլ չտա շփոթվածություն ե վախ, ելք գտնի ցանկացած դժվարություններից... Դրան պետք է ենթարկվեն կարմիր բանակի ամբողջ կուսակցական-քաղաքական աշխատանքը, բանակային, կուսակցական, կոմերիտական կազմակերպությունների գործունեությունը, բանավոր և տպագիր պրոպագանդան։

Զորամասում տարվող կուսակցական-քաղաքական աշխատանքի որակից վիթխարի չափով կախված է նրա տոկունությունը և անձնազոհությունը, մարտում ռազմական գործողությունների հաջողությունը»[4]։

Այդ առումով Հյուսիս-արևմտյան ռազմաճակատի կուսակցական, քաղաքական մարմիններն անհրաժեշտ բարձրության վրա գտնվեցին։ Նրանք ամենածանր պայմաններում քաղաքական լայն աշխատանք ծավալեցին։ Նրանց նախաձեռնությամբ ռազմաճակատի բոլոր զորամասերում և միավորումներում անցկացվեցին միտինգներ, կուսակցական ու կոմերիտական ժողովներ։

Տարբեր ազգությունների ռազմիկներն ու հրամանատարներն իրենց ելույթներում ատելություն էին դրսևորում ֆաշիզմի նկատմամբ և պատրաստակամություն՝ մինչև արյան վերջին կաթիլը պայքարելու հայրենիքի պատվի և ազատության համար։ Այդ միտինգներն ու ժողովները վերածվում էին միասնության և կոմունիստական կուսակցության շուրջը համախմբվածության ցույցի։ Ռազմիկների ելույթները լի էին հայրենիքի նկատմամբ սիրով։ Այսպես, օրինակ, 11-րդ հրաձգային կորպուսի (ութերորդ բանակ) քաղղեկույցներից մեկում նշված է, որ քաղղեկի տեղակալ Պերեկրեստը, հանդես գալով կարմիր բանակայինների ժողովում, ասաց. «Պատմությունը դեռ չդիտի այնպիսի բան, որ ռուս ժողովուրդը պարտություն կրի. մենք միևնույն

---

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 550։

4 «Большевик», 1941, № 13, էջ 7։

լ, կհաղթենք»[5]։ Ռուս ժողովրդի անպարտելիության հանդեպ հավատով էր շնչում վրացի մարտիկ Ղողոբերիձեի ելույթը. «Գերմանական զավթիչները բազմիցս ոտնձգություն են կատարել ռուս ժողովրդի ազատության և անկախության նկատմամբ, բայց նրանց բոլոր փորձերը մշտապես ավարտվել են ձախողումով։ Հերոսական ռուս ժողովուրդը շատ դարեր առաջ Ջուդ լճի սառույցների վրա ջախջախել է գերմանական շուն ասպետներին։ Հերոսական ռուս ժողովուրդը 18-րդ դարի յոթնամյա պատերազմում գրավել է Բեռլինը։ Այժմ նույն հակատագիրն է սպասում ֆաշիստական մարդասպաններին»[6]։

Բազմաթիվ մարտիկների ելույթները լի էին իրենց սոցիալիստական հայրենիքի և նրա զինված ուժերի հզորության հանդեպ խոր հավատի զգացումով։ «Վրա հասավ գերմանական ֆաշիզմի վախճանը.— իր ելույթում ասաց էստոնացի Պ. Կաուպմանը,— սա նրանց համար պատերազմ չէ Ֆրանսիայի դեմ, Սովետական Միությունը նրանց վերջնականապես կջախջախի»[7]։ Մեր հաղթանակի նկատմամբ վստահությամբ տոգորված հրաձգային բրիգադի հայ մարտիկ Ալզատյանը ասաց. «Հիտլերը ցանկանում է ստրկացնել մեր ժողովրդին։ Դա նրան չի հաջողվի։ Մենք կլինենք Բեռլինում, և ես այնտեղ կկատարեմ իմ սիրելի «Երևան, իմ Երևան» երգը»[8]։

Քաղաքական բարձր վերելքի մթնոլորտում էին անցնում 11-րդ բանակի մարտիկների միտինգներն ու ժողովները։ Իրենց ելույթներում սովետական մարտիկները խոսում էին զինվորական պարտքի մասին, պատրաստակամություն էին հայտնում մինչև վերջ կատարել իրենց սրբազան պարտքը հայրենիքի հանդեպ։ Կրտսեր սերժանտ Մահմուդովը իր ելույթում հետևյալն է ասել. «Գերմանա-ֆաշիստական պարագլուխները մեր ժողովրդի վզին են փաթաթել պատերազմը, ժողովուրդ, որը միշտ պաշտպանել է խաղաղության գործը։ Մեզանից յուրաքանչյուրը զինվորական երդում է տվել մեր սահմանների անձեռնմխելիությունը պաշտպանել մինչև վերջին շունչը։ Մենք հաստատ համոզված ենք, որ գլխովին կջախջախենք չափն անցկացրած թշնամիներին»։

Հայրենիքի հանդեպ սովետական մարտիկների բարձր գիտակցությունն ու ինտերնացիոնալ միասնությունը երևան էին գալիս նաև այն բանում, որ շատ մարտիկներ ու հրամանատարներ, անսասան հավատ հայտնելով Լենինի մեծ գործի հաղթանակի նկատմամբ, ցանկանում էին մարտի գնալ որպես կոմունիստներ և խնդրում էին իրենց ընդունել կոմունիստական կուսակցության շարքերը։ «Ցանկանում եմ մարտի գնալ որպես կոմունիստ»,— այս բառերը խոր հուզմունքով էին կրկնում հարյուրավոր և հազարավոր սովետական հայրենասերներ։ Այսպես, օրինակ, 73-րդ կորպուսային հրետանային գնդի ավագ սերժանտ Պոպովը գրել է. «Ֆաշիստական ավազակները տեղ չեն ունենա երկրի երեսին։ Ես ցանկանում եմ մարտի գնալ որպես կո-

---

5 ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՍՍՀՄ ՊՄԿԱ), ֆ. 344, ց. 5592, գ. 8, թ. 29։

6 «Ленинский путь», 24. VI. 1941.

7 ՍՍՀՄ ՊՄԿԱ, 28-րդ դվարդ. հրաձգ. դիվ. ֆոնդ (նախկին 180-րդ էստոնական հրաձգ. դիվ.), ց. 1, գ. 159, թ. 15։

8 Նույն տեղում, ֆ. 221, ց. 1362, գ. 81, թ. 8։

մունիստ»[9]։ 11-րդ բանակի մարտիկ Ի. Միշչեպոկովի դիմումի մեջ գրված է. «Կուսակցական կազմակերպությանը թախանձագին խնդրում եմ մարտից առաջ ինձ ընդունել Համկ(բ)Կ անդամության թեկնածու։ Ֆաշիզմի դեմ լիակատար հաղթանակի հասնելու համար չեմ խնայի ո՛չ իմ ուժերը, ո՛չ էլ կյանքս։ Խնդրում եմ բավարարել իմ խնդրանքը»[10]։ 3-րդ հրաձգային բրիգադի շարքային Անանյանը գրել է. «Իմ հայրը, մայրը, եղբայրը և քույրը բոլորը կոմունիստներ են և ես որոշել եմ այսպիսի ժամանակ դառնալ մեծ Լենինի կուսակցության անդամության թեկնածու։ Ձեր վստահությունը ես պատվով կարդարացնեմ ռազմաճակատում»[11]։

Ժողովներում և միտինգներում, զորամասերում ու միավորումներում սովետական ռազմիկների բոցաշունչ ճառերը, թշնամու դեմ որպես կոմունիստներ մարտի գնալու նրանց ջերմ ցանկությունը ծանր փորձությունների օրերին նրանց բարոյամարտական բարձր ոգու և հայրենիքին ու կոմունիստական կուսակցությանը անսահման նվիրվածության հաստատումն են։

Ամեն օր 8-րդ և 11-րդ բանակների և ամբողջ ռազմաճակատի հրամանատարությունը ստանում էր տարբեր միավորումների, առանձին զորամասերի ու ստորաբաժանումների բազմաթիվ զեկույցները, որոնք պատմում էին մարտիկների ու հրամանատարների բարոյամարտական բարձր ոգու մասին։

11-րդ հրաձգային կորպուսի (8-րդ բանակ) հունիսի 23-ի զեկույցի մեջ ասված է. «11-րդ հրաձգային կորպուսի բոլոր զորամասերը, չնայած հակառակորդի մի քանի անգամ գերազանցող ուժերին, համառորեն պաշտպանում էին պետական սահմանը։ Մարտիկները, հրամանատարներն ու քաղաշխատողները, առանձնապես կոմունիստներն ու կոմերիտականները, մարտում ցույց էին տալիս արիության և անվեհերության օրինակներ»[12]։ Մարտական գործողությունների ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում,— ասված էր 11-րդ բանակի հուլիսի 5-ի զեկույցում,— բանակի զորամասերի քաղաքական-բարոյական վիճակը հիմնականում բարձր էր։ Կոմունիստների և կոմերիտականների մեծամասնությունը իրապես ցուցաբերում էր իր ավանգարդային դերը, ցույց էր տալիս հերոսության և քաջության օրինակներ»[13]։

Մարտնչողների ավանգարդում ընթանում էին քաղաշխատողները, կոմունիստներն ու կոմերիտականները, որոնք իրենց հետևից տանում էին մարտիկներին, ցուցաբերելով արիություն և հերոսություն։ Յուրաքանչյուր քաղաշխատող քաջ դիտեր, որ կուսակցական-քաղաքական աշխատանքի ճիշտ կազմակերպումն ու կատարումը, զորքերի անձնակազմի բարոյական և մարտական ոգու մշտական բարձրացումն առաջնահերթ նշանակություն ունեն ծանր և արյունահեղ պատերազմում և որ շատ բան կախված է իր անձնական վարքագծից։ 11-րդ բանակի 1941 թ. հունիսի 25-ի քաղզեկույցներից մեկում դրված է. «835-րդ հրաձգային գնդի ականային վաշտի քաղզեկ Իվանովը ամեն օր ղեկավարում է կուսակցական-քաղաքական աշխատանքը,

9 Նույն տեղում, ֆ. 344, ց. 5592, գ. 8, թ. 37։
10 Նույն տեղում, ֆ. 357, ց. 5984, գ. 107, թ. 1։
11 Նույն տեղում, ֆ. 221, ց. 1362, գ. 81, թ. 5։
12 Նույն տեղում, ֆ. 344, ց. 5592, գ. 8, թ. 3։
13 Նույն տեղում, ֆ. 357, ց. 5984, գ. 3, թ. 4։

բացի այդ, նա լուծում է վաշտի վրա դրված բոլոր մարտական խնդիրները։ Նա միշտ ինքն է վաշտը գրոհի տանում։ Կարմիրբանակային Ռուսլանովը հայտարարեց. «Մենք չենք վախենում, մեր քաղղեկը հերոս է։ Նա միշտ առջևում է։ Մենք մեր քաղղեկի հետ միշտ հաղթել ենք թշնամուն»[14]։

Իրենց անդուլ գործունեությամբ քաղաշխատողները հրամանատարներին օգնում էին մարտական խնդիրների լուծման գործում, շերմ խոսքով և անձնական օրինակով բարձրացնում էին ռազմիկների մարտական ոգին, ստորաբաժանումներում ու զորամասերում հաստատում էին զինվորական ամուր կարգապահություն և կազմակերպվածություն։ Նրանք միշտ գտնվում էին առջևում, հրամանատարների հետ միասին գլխավորում էին կարմիրբանակայինների գրոհները, ցույց էին տալիս քաջության և խիզախության անձնական օրինակներ։ Այսպես, հունիսի 26-ին Իոնավայի շրջանում 33-րդ հրաձգային դիվիզիայի (11-րդ բանակ) ռազմիկների ու հրամանատարների խմբի հակագրոհը գլխավորում էր ռուս ժողովրդի պանծալի զավակ, դիվիզիայի հրամանատարի քաղգծով տեղակալ, գնդային կոմիսար Ա. Սիլանտևը։ Երբ խիզախ քաղաշխատողը մարտում հերոսի մահով ընկավ, ղեկավարությունն իր վրա վերցրեց մարտի դաշտում գտնվող ուկրաինացի, ԲԳԿԲ-ի գլխավոր քաղաքական վարչության 5-րդ բաժնի պետի տեղակալ, գնդային կոմիսար Պ. Բազիլևսկին և շարունակեց գրոհը, իր ետևից տանելով մարտիկներին ու հրամանատարներին։ Ցուցաբերած արիության և խիզախության համար ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության օգոստոսի 31-ի հրամանագրով Ա. Սիլանտևը հետմահու պարգևատրվեց Լենինի շքանշանով, իսկ Պ. Բազիլևսկին՝ Կարմիր դրոշի շքանշանով[15]։

23-րդ հրաձգային դիվիզիայի (11-րդ բանակ) 1941 թ. հուլիսի 7-ի քաղղեկույցում գրված է. «Այդ մարտերում քաղաշխատողները ցույց տվեցին անձնազոհության և հերոսության օրինակ։ Գումարտակային կոմիսար ընկ. Թովմասյանը Կարմելավայի մոտ մղվող մարտերում ցուցաբերեց անհատական նախաձեռնություն, մարտիկներից ջոկատ կազմակերպեց և նրանց գրոհի տարավ»[16]։ Հունիսի 26-ին 23-րդ հրաձգային դիվիզիայի 89-րդ հրաձգային գունդը հրաման ստացավ ոչնչացնել Կարմելավայում ամրացած հակառակորդին։ Դեռ չհասցրած ելման դիրքերը գրավել, գունդն ինքը գրոհի ենթարկվեց հակառակորդի կողմից։ Գիշերային մարտի անբարենպաստ իրադրության մեջ գունդն իր մեջ ուժ գտավ ծավալվելու և ընդունելու անհավասար մարտը։ Գունդը կորուստներ էր կրում։ Օրհասական րոպեին Թովմասյանը հավաքեց մարտիկների մի խումբ և նրանց հակագրոհի տարավ։ Անհավասար մարտում գումարտակային կոմիսար Թովմասյանը ընկավ հերոսի մահով[17]։ Այդ օրը թշնամու դեմ հերոսաբար մարտնչեցին դումարտակային կոմիսար Նիկուլինը, քաղղեկ Վոլոշչենկոն, կրտսեր քաղղեկ Սոլոդովնիկը և ուրիշներ։

Պետական սահմանի շրջանում անձնազոհաբար կռվում և անձնական օրինակով մարտիկներին ոգեշնչում էին 5-րդ հրաձգային դիվիզիայի (11-րդ

---

14 Նույն տեղում, թ. 65։

15 Նույն տեղում, ֆ. 33, ց. 682523, գ. 84, թ. 71, 81։

16 Նույն տեղում, ֆ. 357, ց. 5984, գ. 12, թ. 11։

17 Նույն տեղում, գ. 3, թ. 11—12։

բանակ) քաղաքներ Ֆ. Տկաչուկը և Ի. Բիրյուկովը։ Ռուս խիզախ մարտիկները հերոսաբար զոհվեցին մարտում։ Ֆ. Տկաչուկը և Ի. Բիրյուկովը հետմահու պարգևատրվեցին համապատասխանաբար Կարմիր դրոշի և Կարմիր աստղի շքանշաններով[18]։

Պատերազմի առաջին օրերին Հյուսիս-արևմտյան ռազմաճակատում աչքի ընկավ 48-րդ տանկային գնդի 2-րդ դումարտակի (8-րդ բանակ) կոմերիտական կազմակերպիչ Մ. Բաբայանը։ Նրա կոմերիտական ու մարտական աշխատանքի փորձը լայնորեն տարածվեց ամբողջ Հյուսիս-արևմտյան ռազմաճակատում։ Մարտում իր համարձակ գործողություններով, դժվար ռոպեին ընկերներին օգնելու պատրաստակամությամբ նա լավ օրինակ էր ծառայում ամբողջ զորամասի համար։ Նրա գործողությունները հետևյալ կերպ են բնութագրվել ռազմաճակատի քաղվարչության տեսության մեջ. «Խմբի կոմերիտկազմակերպիչ ընկ. Մ. Բաբայանը բոլշևիկյան ջերմ խոսքով ու գործով իր դասակի կոմերիտականներին ու նրիտասարդությանը խանդավառում է անողոք պայքար մղելու գազանացած ֆաշիստների դեմ»[19]։

Հակառակորդի դեմ մղվող օդային մարտերում տոկունության և անձնազոհության օրինակներ ցուցաբերեցին օդաչու-քաղաքներ Ս. Հայրապետովը, Գ. Լոմաձեն, Ս. Սենկևիչը, Լ. Զապչախովը և շատ ուրիշներ։

Պաշտպանական ծանր մարտերի ընթացքում Հյուսիս-արևմտյան ռազմաճակատի զորամասերում և միավորումներում կուսակցական-քաղաքական աշխատանքը ոչ մի օր չէր դադարում։ Կուսակցական-քաղաքական աշխատանքը ուժեղացնելու համար 8-րդ բանակի ռազմական խորհուրդը իր 1941 թ. հուլիսի 6-ի հրամանում առաջարկում էր.

1. Կորպուսների և դիվիզիաների քաղաքական պրոպագանդայի բաժինները 1941 թ. հուլիսի 7-ի ընթացքում պետք է անցկացնեն վաշտային, գումարտակային և մյուս ստորին կուսակցական կազմակերպությունների ժողովներ, որտեղ պետք է քննարկեն կոմունիստների խնդիրները իրենց զորամասերի ու ստորաբաժանումների հրամանատարության հրամանի կատարման գործում։

2. Զորամասերի, ստորաբաժանումների և առանձին մարտիկների միջև կազմակերպել սոցիալիստական մրցություն՝ հրամանը գերազանց կատարելու, խրամատները լավ և արագ փորելու, հակառակորդի ավելի շատ ինքնաթիռներ, տանկեր, կենդանի ուժ ոչնչացնելու համար։

3. Լայնորեն մասսայականացնել հրամանատարների ու մարտիկների ցուցաբերած համարձակությունը, քաջությունը, խիզախությունը և արիությունը։

4. Հրամանատարների, քաղաշխատողների ու մարտական ակտիվի ուժերով զորամասերի բոլոր ջոկերում կարմիր բանակայիններ հետ զրույցներ անցկացնել «Ինչպես հետևակը կարող է ոչնչացնել տանկերը» թեմայով։

5. Աշխատանք ծավալել մարտում իրենց դրսևորած լավագույն մարտիկներին ու հրամանատարներին կուսակցության և կոմերիտմիության մեջ ներգրավելու ուղղությամբ[20]։

---

18 Նույն տեղում, ֆ. 33, ց. 682523, գ. 84, թ. 81, 121։
19 Նույն տեղում, ֆ. 221, ց. 1362, գ. 16, թ. 368—381։
20 Նույն տեղում, ֆ. 344, ց. 5592, գ. 1, թ. 172—173։

Քաղմարմինները, կուսակցական ու կոմերիտական կազմակերպությունները ուժեղացրին աշխատանքը՝ մարտիկներին ու հրամանատարներին կուսակցության և կոմերիտմիության շարքերն ընդունելու ուղղությամբ։ Այսպես, մինչև հուլիսի 14-ը 23-րդ տանկային դիվիզիայում կուսակցության շարքերն ընդունվեց 8 մարդ[21], մինչև օգոստոսի 9-ը 11-րդ հրաձգային դիվիզիայում՝ 60 մարդ[22], 33-րդ հրաձգային դիվիզիայում՝ 37 մարդ[23]։ Պատերազմի առաջին ամիսներին կուսակցության շարքերն ընդունվելու մասին դիմումները շատ էին, բայց երաշխավորություն տալու իրավունք ունեցող շատ կոմունիստներ կամ զոհվել էին, կամ վիրավորվելու պատճառով շարքից դուրս եկել։ Այդ պատճառով էլ գործող բանակի կուսակցական կազմակերպություններն ամրապնդելու համար կուսակցության Կենտկոմը վերանայեց կուսակցության մեջ ընդունելության կարգը։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1941 թ. օգոստոսի 19-ի որոշման համաձայն, մարտերում առանձնապես աչքի ընկած մարտիկներին թույլատրվում էր ներկայացնել կուսակցական մեկ տարվա ստաժ ունեցող կուսակցության երեք անդամների երաշխավորությունները։ Կուսակցության մեջ ընդունվելու հարցը թույլատրվում էր քննարկել սկզբնական կուսակցական կազմակերպության բյուրոյի նիստում, որի որոշումը հաստատվում էր կուսհանձնաժողովի կողմից, մի կողմ թողնելով սկզբնական կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովը[24]։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի այդ որոշման շնորհիվ կարճ ժամանակում ռազմաճակատի կուսակցական կազմակերպությունները համալրվեցին հայրենիքի լավագույն զավակներով։ Կուսակցական կազմակերպությունների ամրապնդման գործում վիթխարի դեր խաղացին քաղմարտիկները։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1941 թ. հունիսի 27-ի որոշմամբ անցկացվեց կոմունիստների և կոմերիտականների առաջին մոբիլիզացիան։ «...Ամեն անգամ, երբ պատերազմի միջոցին դրժվարին մոմենտ էր լինում, կուսակցությունը մոբիլիզացնում էր կոմունիստներին և առաջին հերթին նրանք էին ընկնում առաջին շարքերում, նրանք հազարավորներով ընկան Կոլչակի և Յուդենիչի ճակատներում, ոչնչանում էին բանվոր դասակարգի լավագույն մարդիկ, որոնք իրենց զոհաբերում էին, հասկանալով, որ իրենք կոչնչանան, բայց կփրկեն սերունդներ, կփրկեն հազար ու հազար բանվորներ ու գյուղացիներ»[25]։

Եվ կրկին ռազմաճակատ մեկնեցին հայրենիքի լավագույն զավակները։ Կարճ ժամանակում քաղմարտիկները խտացրին կուսակցական կազմակերպությունների շարքերը, որոնք դարձան ավելի լիարյուն ու մարտունակ։ Նրանք ամեն կերպ օգնում էին հրամանատարներին՝ մարտական խնդիրները հաջողությամբ լուծելու գործում։

Ռազմաճակատի կուսակցական և քաղաքական մարմինները առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում կարգապահության և կազմակերպվածության, վախկոտների ու խուճապարարների դեմ մղվող պայքարի, մարտիկ-

---

21 Նույն տեղում, ֆ. 221, ց. 1362, գ. 53, թ. 25։

22 Նույն տեղում, ֆ. 344, ց. 5592, գ. 15, թ. 12։

23 Նույն տեղում, ֆ. 1119, ց. 1, գ. 121, թ. 42։

24 «Партийно-политическая работа в Советских Вооруженных силах в Великой Отечественной войне», М., 1968, էջ 41։

25 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 636։

ների մեջ տանկերի ու ինքնաթիռների նկատմամբ հղած վախը հաղթահարելու հարցերին։ Գլխավոր քաղաքական վարչության 1941 թ. հուլիսի 15-ի դիրեկտիվում ասված էր. «Ամբողջ քաղապարատը, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները պետք է վճռական պայքար մղեն խուճապարարների, վախկոտների, մորթապաշտների, պարտվողականների դեմ, առանց դեմքերին նայելու»[26]։ Կարմիր բանակն իր շարքերում չէր հանդուրժում վախկոտներին ու խուճապարարներին։ 10-րդ հրաձգային կորպուսի 80-րդ առանձին հրաձգային գումարտակի միտինգի ժամանակ կարմիրբանակային Նվտուշենկոն ասաց. «Ոչ մի գթություն վախկոտներին և խուճապարարներին։ Կներդնենք բոլոր ջանքերը, մեր բոլոր գիտելիքները՝ հրամանատարության մարտական առաջադրանքները արագ և ճիշտ կատարելու համար»[27]։

Կուսակցական-քաղաքական աշխատանքում կարևոր տեղ էր գրավում գերմանա-ֆաշիստական զավթիչների նկատմամբ ատելության զգացման դաստիարակումը։ Այդ նպատակով օգտագործվում էին սովետական ռազմագերիների նկատմամբ ֆաշիստների գազանային վերաբերմունքի բազմաթիվ փաստերը, այն հայրենասիրական նամակներն ու հեռագրերը, որոնք մարտիկներն ստանում էին իրենց հարազատներից։

Ռազմաճակատի քաղվարչությունը լայնորեն օգտագործում էր նաև հայրենասիրական լոզունգները։ Հյուսիս-արևմտյան ռազմաճակատի քաղաքական պրոպագանդայի վարչությունը պատերազմի առաջին շաբաթներին նախապատրաստեց և հրատարակեց 25 տարբեր թերթիկներ, այդ թվում այսպիսի վերնագրերով. «Սովետական ժողովուրդը մղում է արդարացի, հայրենական պատերազմ», «Կարմիր բանակի մարտիկները գերի չեն հանձնվում», «Հերոսությունն ու արիությունը հատուկ են կարմիր բանակի մարտիկներին», «Կարմիր բանակի մարտիկների օրենքն է՝ մարտում տոկուն լինել մինչև վերջ»։

Կուսակցական-քաղաքական աշխատանքում, որպես կոլեկտիվ ագիտատորի և կազմակերպչի, վիթխարի դեր էր պատկանում ռազմաճակատային մամուլին, և պատահական չէ, որ պատերազմի հաջորդ օրը կուսակցությունը միջոցներ ձեռք առավ մարտական թերթերի ընդլայնման և ամրապնդման համար։ 1941 թ. հունիսի 23-ին Քաղաքական պրոպագանդայի գլխավոր վարչությունը հրատարակեց հետևյալ դիրեկտիվները՝ «Ռազմաճակատի, բանակի և դիվիզիայի մամուլի բովանդակության մասին» և «Բանակ զորակոչելու կապակցությամբ բանակի, օկրուգի և դիվիզիայի մամուլի աշխատանքի մասին»։ Այդ դիրեկտիվներում ասված է, որ ռազմաճակատային մամուլի գլխավոր խնդիրը անձնակազմի դաստիարակումն է ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության, ինտերնացիոնալիզմի, հերոսության, արիության, ռազմական արվեստը գիտենալու, զինվորական պարտքը հստակորեն կատարելու, կարգապահությանը ենթարկվելու ոգով։ Ղեկավարվելով այդ ցուցումներով, Հյուսիս-արևմտյան ռազմաճակատի «Զա ռոդինու», 8-րդ բանակի «Լենինսկի պուտ», 11-րդ բանակի «Զնամյա Սովետով» թերթերը,

26 «Партийно-политическая работа в Советских Вооруженных силах в Великой Отечественной войне», էջ 41։

27 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 344, ց. 5592, գ. 7, թ. 42։

դիվիզիաների ու դնդերի թերթերը հիմնական ուշադրությունը կենտրոնացնում էին այնպիսի հարցերի պարզաբանման վրա, ինչպիսին էին պատերազմի աղատագրական բնույթը, մեր երկրի անսպառ ուժը, սովետական մարտիկների հերոսության, արիության, համարձակության և անձնազոհության ցուցադրումը, կուսակցական-քաղաքական աշխատանքի, սովետական մարտիկների բարեկամության լուսաբանումը և այլն։

Պատերազմի երկրորդ օրը «Զա ռոդինու» թերթը բոցավառ կոչ հրապարակեց՝ հասցեագրված ռազմաճակատի բոլոր մարտիկներին՝ «Հառաջ, քաջարի ռազմիկներ։ Մեր փառապանծ հետևակայիններ, հրետանավորներ, տանկիստներ, օդաչուներ և զենքի բոլոր տեսակի մարտիկներ, սրբությամբ կատարեցեք ձեր զինվորական պարտքը, ձեր պարտքը հայրենիքի հանդեպ»[28]։ «Օրինակ վերցրեք ավագ լեյտենանտ Կոբզարի գումարտակի մարտիկներից ու հրամանատարներից», «Մեր ուժերը աճում են», «Սրբությամբ կատարել երդումը», «Մարտիկ, քո հայրենիքը պաշտպանիր հմտորեն, արժանապատվությամբ և պատվով», «Մեր հերոսների սխրագործությունը», «Հերոսների բանակում տեղ չկա վախկոտներին ու խուճապարարներին», «Կուսբյուրոյի քարտուղարի նախաձեռնությունը», «Գերազանց հրաձիգ Նիկոլայտիսը», «Փոխադարձ օգնություն» և մյուս հոդվածները ունեին հայրենասիրական խոր բովանդակություն։ «Հայրենական պատերազմի հերոսներն ընդունվում են բոլշևիկյան կուսակցության շարքերը» հոդվածում պատմվում էր, թե ինչպես տանկիստ Բերեդնիկովը մարտից առաջ դիմում է գրել կուսակցական բյուրոյին, խնդրելով իրեն ընդունել կուսակցության շարքերը և թե ինչպես է նա գործով ապացուցել, որ արժանի է լինելու կուսակցության անդամ։ Հակառակորդի դեմ մղած մարտում Բերեդնիկովը ցուցաբերեց համարձակություն և վճռականություն։ Նա ոչնչացրեց մի քանի հակատանկային հրանոթ։ Երբ նրա տանկը խոցվեց թշնամու արկով, նա անմիջապես դուրս եկավ մեքենայից, անձնակազմին հրամայեց հանել զինամթերքը և պատրաստվել պաշտպանության, բայց այդ պահին նա տեսավ վաշտի հրամանատար Ստեպանովի խոցված տանկը։ Վտանգելով իր կյանքը, Բերեդնիկովը ծանր վիրավորված հրամանատարին դուրս է բերում այրվող մեքենայից և արագ նստեցնում մի այլ տանկի մեջ[29]։

«Լենինսկի պուտ» թերթի (8-րդ բանակ) «Հաղթեցին դիմացկունությունն ու համառությունը», «Քաջերի վաշտը», «Խիզախում», «Խիզախների գումարտակը», «Ընկերոջ կյանքը թանկ է սեփական կյանքից», «Կոմունիստները կռվում են հերոսաբար», «Կուսակցական կազմակերպության մարտական խնդիրները» հոդվածները մարտիկներին ոգեշնչում էին նոր հերոսական արարքների։ Թերթը լուսաբանում էր ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության հարցերը, մարտական բարեկամությունը տարբեր ազգությունների ռազմիկների միջև։ «Կռվել սովետական հողի ամեն մի թզի համար» հոդվածում պատմվում էր, թե ինչպես նույն վաշտում համերաշխ կերպով ծառայում են տարբեր ազգությունների մարտիկները՝ վաշտի հրամանատար, ուկրաինացի Վելիչկոն, քաղղեկ, կարելացի Զոնյակովը, ավագ, բելոռուս

---

[28] «За Родину», 23. VI. 1941.

[29] Նույն տեղում, 16. VII. 1941։

Պոչինոկը, եֆրեյտոր, ռուս Ռոգատնևը, մարտիկներ՝ ադրբեջանցի Մահմեդովը, վրացի Լեժավան, հայ Աղարարյանը և ուրիշներ։ Ինտերնացիոնալ վաշտն անսասան կերպով ետ էր մղում թշնամու կատաղի գրոհը։ Ռոգատնևը ու Մահմեդովը պառկել էին ձևոքի գնդացիրների մոտ և 20 մետր տարածությունից դիմահար խփում էին թշնամուն։ Նրանք սրբությամբ կատարեցին զինվորական երդման պահանջները՝ կռվել ամեն մի թիզ սովետական հողի համար։ Ոչինչ չէր կարող ստիպել խիզախ գնդացրորդներին՝ նահանջելու իրենց գրաված դիրքից։ Հերոսները մինչև վերջին շունչը կրակ էին տեղում հարձակվող հակառակորդի վրա։ Անհավասար մարտում հերոսի մահով ընկան մարտական եղբայրները՝ ռուս Ռոգատնևը և ադրբեջանցի Մահմեդովը[30]։

11-րդ բանակի «Զնամյա սովետով» թերթը մեծ ուշադրություն էր հատկացնում հերոսության, հայրենասիրության, սովետական մարտիկների բարեկամության պրոպագանդային։ «Մարտերում կոփված բարեկամություն» հոդվածում պատմվում էր, թե ինչպես գնդապետ Շտիկովի զորամասում միասնական ընտանիքում թշնամու դեմ պայքարում էին մեր Երկրի տարբեր ազգությունների ներկայացուցիչներ։

Սովետական Մերձբալթիկայի համար մղված պաշտպանական մարտերում սովետական մարտիկների ցուցաբերած արիությունը նշվել է կառավարական բարձր պարգևներով։ Տարբեր ազգությունների 30 մարտիկներ արժանացել են Սովետական Միության հերոսի կոչման։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1941 թ. հուլիսի 25-ի և օգոստոսի 31-ի հրամանագրերով Լենինի շքանշանով պարգևատրվել է 12, Կարմիր դրոշի շքանշանով՝ 155, Կարմիր աստղի շքանշանով՝ 132, «Խիզախության համար» մեդալով՝ 87, «Մարտական ծառայությունների համար» մեդալով՝ 25 մարդ[31]։

Կարմիր բանակը և նրա մարտիկները, անսահմանորեն նվիրված իրենց հայրենիքին ու կոմունիստական կուսակցության գործին, պատվով դիմացան 1941 թ. դաժան փորձություններին։

ПАРТИЙНО-ПОЛИТИЧЕСКАЯ РАБОТА В ВОИНСКИХ ЧАСТЯХ СЕВЕРО-ЗАПАДНОГО ФРОНТА

МАРАТ СААКЯН

Резюме

В начале Великой Отечественной войны в северо-западных пределах нашей страны, в Прибалтике, шли кровопролитные бои между немецко-фашистскими войсками и частями Красной Армии. Многочисленные архивные материалы свидетельствуют об огромной партийно-политической работе, проводившейся в частях и соединениях 8-й и 11-й армий Северо-Западного фронта, а также о высоком морально-боевом духе и интернациональном единстве воинов этих армий.

---

30 «Ленинский путь», 30. VIII. 1941.

31 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, գ. 682523, գ. 1, թ. 94—109, գ. 14, թ. 14—23։ Հաշվումները կատարված են մեր կողմից։